ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՏԻԿԻՆ ՕՎՍԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Հովսեփյան

Ի պատասխան Ձեր 28.07.2021թ. գրության՝ տեղեկացվում է.

Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից 2021 թվականի հուլիսի 14-ին մերժվել է Երևան քաղաքի Թամանյան փողոց 2 շենք թիվ 67 տարածք և նույն շենքի թիվ 35 բնակարան հասցեում հանրային սննդի կազմակերպման և ոգելից խմիչքների իրացման թույլտվությունները տրամադրելու վերաբերյալ դիմումները՝ Երևան քաղաքի Թամանյան փողոց 2 շենքի թիվ 35 բնակարանի տարածքը բնակելի նպատակային նշանակության լինելու հիմնավորմամբ:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից 2021 թվականի հուլիսի 26-ին Երևան քաղաքի Թամանյան փողոց 2-րդ շենք բնակարան 35 հասցեում գտնվող շինությունն օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ոչ նպատակային օգտագործելու համար կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ հ.038972 արձանագրությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ